



Շաբաթական ակնարկ 01.09.2025

Սույն «Շաբաթական ակնարկ» վերլուծությունը կազմվել է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի կողմից և կարող է օգտագործվել **միայն որպես ընդհանուր բնույթի տեղեկություն**: Վերջինս արդիական է հրապարակման օրվանից շուկայի վարքագծով պայմանավորված ողջամիտ ժամկետում: «Շաբաթական ակնարկ» վերլուծական հաշվետվությունը կազմվել է ներկայումս հասանելի **հանրային տեղեկատվության** հիման վրա, որն ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ը համարում է վստահելի: Սակայն, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն **չի երաշխավորում**, որ այդ տեղեկատվությունը հանդիսանում է լիարժեք և արժանահավատ, և, հետևաբար, այն **չպետք է ընկալվի որպես խորհուրդ կամ առաջարկ՝ որևէ ֆինանսական գործարք իրականացնելու դեպքում**:

«Շաբաթական ակնարկ» վերլուծության մեջ ներկայացված գործիքների ընտրությունը պայմանավորված է **շուկայի ընդհանրական մոտեցմամբ**, բարձր շրջանառության ծավալ ու հանրային լայն ընկալում ունեցող ընկերությունների բաժնետոմսերի նկատմամբ հաշվետու ժամանակահատվածում ձևավորված մեծ հետաքրքրությամբ: Հետևաբար, ընտրված ներդրումային պրոդուկտները կարող են **չհամապատասխանել բոլոր ներդրողների ցանկություններին և պահանջներին**: Ներդրումներ իրականացնող ցանկացած անձ պետք է **անհատապես ուսումնասիրի և յուրովի գնահատի** իր ներդրումային հնարավորությունները, ներդրումային պորտֆելի կառուցվածքը և դրանցից բխող ռիսկերը բոլոր կամ առանձին վերցրած ակտիվների գծով: Նախքան որևէ ներդրումային որոշում կայացնելը կամ գործարք իրականացնելը, յուրաքանչյուր ներդրող պետք է ուսումնասիրի այն տեղեկատվությունը, որը պարունակում է ռիսկերի, միջնորդավճարների և հնարավոր այլ ծախսերի նկարագրությունը: Յուրաքանչյուր ներդրող պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնի **ռիսկ/եկամուտ հարաբերակցությանը** և համոզվի, որ ներդրումը համապատասխանում է վերջինիս ներդրումային նպատակներին:


Հնարավոր կորստի կամ եկամտի ցանկացած կանխատեսում **գուտ նկարագրություն** է և չպետք է դիտվի որպես հնարավոր առավելագույն կորստի կամ շահույթի սահմանափակում: Ներդրումները **երաշխավորված կամ ապահովագրված չեն ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ** կամ այլ ֆինանսական ընկերության կամ որևէ տեղական ինքնակառավարման մարմնի կամ ապահովագրական գործակալության կողմից, հետևաբար **բախվում են ներդրումային ռիսկերի հետ**, ներառյալ՝ **ողջ գումարի հնարավոր կորստի ռիսկը**: Ներդրողներն, ովքեր ներդրումներ են կատարում արտարժույթով, պետք է տեղյակ լինեն փոխարժեքի տատանումների ռիսկի մասին, որը կարող է հանգեցնել ներդրված գումարի կորստի:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն ենթադրում է, որ հաճախորդը նախքան ներդրումներ իրականացնելը, **գիտակցում և տեղյակ է գործարքի հետ կապված ցանկացած հարկային և իրավական** պարտավորությունների մասին: ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն **պատասխանատվություն չի կրում** այն բոլոր ուղղակի, անուղղակի հնարավոր **վնասների համար**, որոնք առաջացել են «Շաբաթական ակնարկ» վերլուծության մեջ առկա տեղեկատվության և հետևությունների մասնակի կամ ամբողջական օգտագործման հետևանքով:


Նախորդ ամիս ԱՄՆ բոլոր հիմնական բաժնետոմսային ինդեքսները արձանագրեցին դրական եկամտաբերություն:



2025 թվականի օգոստոսի դրությամբ M2 փողի զանգվածը հասել է նոր պատմական առավելագույնի՝ 22.12 տրիլիոն դոլարի:




Ոսկու բաժինը համաշխարհային պահուստներում 2025 թվականի առաջին եռամսյակում հասնել է 24%-ի:




Նախորդ ամսվա արդյունքներով ԱՄՆ պարտատոմսերի շուկայում դրական եկամտաբերություն արձանագրել են միայն 30 տարեկան պարտատոմսերը:




Նախորդ շաբաթվա ընթացքում S&P 500-ը նվազեց 0.04 %-ով



Նախորդ շաբաթվա ընթացքում Nasdaq-ը նվազեց 0.27 %-ով



Նախորդ շաբաթվա ընթացքում Dow Jones-ը նվազեց 0.12 %-ով



Նախորդ շաբաթվա ընթացքում Russell 2000-ը անեց 0.14 %-ով



Հիմնական բաժնետոմսային ինդեքսների դինամիկան նախորդ ամիս

- Նախորդ ամսվա ընթացքում ԱՄՆ բոլոր հիմնական ինդեքսները գրանցեցին դրական եկամտաբերություն, առաջատարը Russell 2000-ն էր (փոքր կապիտալիզացիայի ինդեքս):
- Russell 2000-ը զգալիորեն գերազանցեց մյուս բոլոր ինդեքսներին և ամիսն ավարտեց մոտ 6.9%-ով աճով: Russell 2000-ի աճը արտացոլում է ներդրողների ռիսկի հանդեպ ախորժակի աճը և տնտեսության համեմատական ամրապնդման սպասումները:
- Dow Jones Industrial Average-ն աճեց 3.17%-ով՝ արտացոլելով խոշոր կապիտալիզացիա ունեցող ընկերությունների (blue chips) ամրապնդումը:
- Dow Jones Transportation Average-ն աճեց 2.93%-ով՝ արտացոլելով ցիկլիկ ոլորտներում, (ինչպիսիք են լոգիստիկան և նավագնացությունը), տրամադրությանների բարելավումը:
- S&P 500-ը և Nasdaq Composite-ը գրանցեցին համեստ աճ՝ համապատասխանաբար 1.78% և 1.53%:
- Nasdaq 100-ը ապահովեց ամենաթույլ ցուցանիշը աճելով ընդամենը 0.8%՝ ընդգծելով մեծ կապիտալիզացիա ունեցող տեխնոլոգիական ընկերությունների թուլությունը՝ չնայած շուկայի ընդհանուր ամրապնդմանը:
- Nasdaq-100-ի և Russell 2000-ի միջև տարբերությունը խոսում է խոշոր տեխնոլոգիական ընկերություններից դեպի ավելի լայն և ցիկլիկ ոլորտների անցման մասին:




Mag7-ի բաժնետոմսերը ամսվա ընթացքում արձանագրեցին ավելի թույլ եկամտաբերություն, քան S&P 493 ինդեքսը:

Գերազնահատուման ավելցուկը չի սահմանափակվում միայն բաժնետոմսերով: Լոտֆի Կարուին պնդում է, որ վարկային պորտֆելների անկումից պաշտպանվելու համար որոշակի քայլեր ձեռնարկել հաշվի առնելով գերազնահատվածությունը:



NVIDIA Corporation-ի (NVDA) շահույթը մեկ բաժնետոմսի դիմաց երկրորդ եռամսյակում կազմել է 1.05 դոլար, որը զգալիորեն ավելի է, քան մեկ տարի առաջ և մոտ 4 ցենտով բարձր է կանխատեսումներից: Ընդհանուր հասույթը տարեկան կտրվածքով աճել է 56%-ով՝ հասնելով 46.7 միլիարդ դոլարի, ինչը պայմանավորված է տվյալների կենտրոնների հատվածի աճով (Blackwell-ի եռամսյակային աճը կազմել է 17%): Չնայած ուժեղ արդյունքներին, այդ թվում՝ 60 միլիարդ դոլարի բաժնետոմսերի հետգնման հայտարարությանը ընկերության բաժնետոմսերի գինը նվազեց մոտ 3%-ով՝ Չինաստանի ազդեցության և աճի դանդաղման վերաբերյալ մտահոգությունների պատճառով:



Dell Technologies-ը (DELL) երկրորդ եռամսյակում մեկ բաժնետոմսի դիմաց շահույթը կազմել է 2.32 դոլար, որը նախորդ տարվա արդյունքից բարձր է 19%-ով և գերազանցում է սպասումները: Ընդհանուր հասույթը տարեկան կտրվածքով աճել է 19%-ով՝ հասնելով 29.8 միլիարդ դոլարի, ինչը ռեկորդային ցուցանիշ է երկրորդ եռամսյակի համար՝ պայմանավորված արհեստական բանականության սերվերների պահանջարկով (Infrastructure Solutions Group-ը աճել է 44%-ով): Սակայն ընկերության բաժնետոմսերի գինը նվազեց երրորդ եռամսյակի կանխատեսումների պատճառով, չնայած ամբողջ տարվա կանխատեսումների աճին:




Alibaba Group Holding Limited (BABA) ընկերությունը երկրորդ եռամսյակում գրանցել է 247.7 միլիարդ յուանի (մոտ 34.6 միլիարդ ԱՄՆ դոլար) հասույթ, որը նախորդ տարվա համեմատ մոտ 2%-ով ավելի է, բայց ցածր է սպասումներից: Մեկ բաժնետոմսի դիմաց շահույթը կազմել է 14.75 յուան, ինչը գերազանցում է 15.47 յուանի կանխատեսումը: Ամպային ոլորտից հասույթը կտրուկ աճել է (մոտ 31% տարեկան), լրացնելով առցանց շուկաների թուլացումը (-6%): Չնայած EPS-ի անկմանը, բաժնետոմսերի գինը բարձրացել է ռազմավարական ոլորտների աճի և դիմադրողականության շնորհիվ:



Marvell Technology-ն (MRVL) երկրորդ եռամսյակում մեկ բաժնետոմսի դիմաց ապահովել է 0.67 դոլարի շահույթ, որը նախորդ տարվա համեմատ 0.30 դոլարով ավելի է և համապատասխանում է սպասումներին: Հասույթը հասել է 2.006 միլիարդ դոլարի, ինչը ռեկորդային ցուցանիշ է, տարեկան աճը՝ 58%, ինչը պայմանավորված է տվյալների կենտրոնների և ցանցային ոլորտներում արհեստական բանականության տեխնոլոգիաների պահանջարկով: Սակայն ընկերության բաժնետոմսերի գինը կտրուկ անկում ապրեց (մոտ 19%), երբ ընկերությունը հրապարակեց երրորդ եռամսյակի կանխատեսումը:



- Կարճաժամկետ (2 տարի) եկամտաբերությունը ամենաշատը նվազել է՝ հասնելով -0.3363 -ի, ինչը արտացոլում է Դաշնային պահուստային համակարգի քաղաքականության և տոկոսադրույքների իջեցման վերաբերյալ փոփոխվող սպասումները:
- Միջնաժամկետ (5 տարի, -0.2783 ; 7 տարի, -0.2318) եկամտաբերությունը նույնպես կտրուկ նվազել է՝ համահունչ աճի/ինֆլյացիայի ավելի ցածր սպասումներին:
- 10 տարի եկամտաբերությունը նվազել է մինչև -0.1533 ՝ հաստատելով շուկայի տեսակետը երկարաժամկետ աճի դանդաղման մասին:
- 30 տարի եկամտաբերությունը մնացել է փոքր-ինչ դրական՝ $+0.0121$ մակարդակում, ինչը ցույց է տալիս, որ ավելի երկարաժամկետ պետական պարտատոմսերն ավելի լավ են դիմանում, քան ավելի կարճաժամկետ պարտատոմսերը:
- Եկամտաբերության կորի կտրուկ անկումը, հատկապես կարճաժամկետ պարտատոմսերի, ենթադրում է, որ ներդրողները կանխատեսում են Դաշնային պահուստային համակարգի կողմից տոկոսադրույքի իջեցումը կամ տնտեսական աճի դանդաղումը:
- Պարտատոմսերի շուկան զգուշության ազդանշան է տալիս, եկամտաբերությունը կտրուկ նվազում է, իսկ կորը մնում է շրջված, ինչը վկայում է դանդաղ տնտեսական աճի կամ հնարավոր անկման մասին մտահոգությունների մասին:



Շուկայի մասնակիցների ընդհանուր կարծիքով Դաշնային պահուստային համակարգը կնվազեցնի տոկոսադրույքները սեպտեմբերյան նիստում:

Դոլարը օգոստոսին անկում ապրեց վերջին ութ ամիսներից յոթերորդ ամիսը անընդմեջ, հիմնականում ամսվա սկզբին աշխատավարձերի տվյալների հրապարակման շնորհիվ: Վերջին երեք շաբաթների ընթացքում այն տատանվում է իր 50-օրյա սահող միջինի շուրջ:



Ոսկին, որը վերջին երեք ամիսների ընթացքում գտնվում էր որոշակի միջակայքում օգոստոսին վերջին բարձրացավ և արձանագրեց նոր ռեկորդային բարձրակետ:




Արծաթը ամսվա ընթացքում գերազանցեց ոսկուն՝ հարաբերակցությունը իջեցնելով մինչև տարեկան ամենացածր մակարդակ՝ մոտ 86 անգամ: Արծաթը հասել է 14 տարվա ամենաբարձր մակարդակին: Արծաթը հասել է 14 տարվա ամենաբարձր մակարդակին:



Չորս ամիս անընդմեջ աճից հետո Bitcoin-ը արձանագրեց փետրվարից ի վեր իր ամենավատ ամիսը՝ գրանցելով 7%, ամսվա նոր ռեկորդային բարձրակետերին հասնելուց հետո:




Ethereum-ը ցույց տվեց զգալիորեն ավելի բարձր դինամիկա ամսվա ընթացքում աճելով 16%-ով:



Ոսկին դուրս է մղում ֆիատային արժույթները որպես պահուստային արժույթ: Ոսկու բաժինը համաշխարհային միջազգային պահուստներում 2025 թվականի առաջին եռամսյակում աճել է 3 տոկոսային կետով՝ հասնելով 24%-ի, որը ամենաբարձրն է վերջին 30 տարվա ընթացքում: Սա արդեն երրորդ անընդմեջ տարեկան աճն է: Միևնույն ժամանակ, ԱՄՆ դոլարի բաժինը նվազել է մոտ 2 տոկոսային կետով՝ հասնելով 42%-ի, որը ամենացածրն է 1990-ականների կեսերից ի վեր: Եվրոյի բաժինը գործնականում մնացել է անփոփոխ՝ մոտ 15%: Ոսկին այժմ աշխարհի երկրորդ խոշորագույն պահուստային ակտիվն է՝ 2024 թվականին գերազանցելով եվրոյին: Ոսկու պահանջարկը հասել է պատմական մակարդակի:

Global International Reserves (inc. Q1 2025)




Ճապոնական պետական պարտատոմսերի ինստիտուցիոնալ պահանջարկը թուլանում է: Ապահովագրական ընկերությունները 2025 թվականի առաջին յոթ ամիսներին վաճառել են ավելի շատ գերերկար ճապոնական պետական պարտատոմսեր, քան գնել են, ինչը պատմության մեջ առաջին անգամ է, երբ նրանք դարձրել է զուտ վաճառողներ: Գերերկար պարտատոմսերը ունեն 20, 30 և 40 տարվա մարման ժամկետներ: Թրաստ բանկերը, որոնք հաճախ դիտվում են որպես կենսաթոշակային ֆոնդերի փոխարինողներ, գնել են ընդհանուր առմամբ 1.47 տրիլիոն իենի գերերկար ճապոնական պետական պարտատոմսեր, ինչը մոտ 34%-ով ցածր է 5-ամյա միջինից: Համեմատության համար, նրանց գնումները ամբողջ 2024 թվականին կազմել են 7.39 տրիլիոն իեն: Ցածր պահանջարկը նպաստել է 30-ամյա ճապոնական պարտատոմսերի եկամտաբերության բարձրացմանը մինչև 3.19%, որը մոտ է ռեկորդային բարձրակետին:


Demand Stays Weak for Super-Long JGBs

Annual net purchases of super-long JGBs*

Insurers



Pension funds**




Sources: Bloomberg, Japan Securities Dealers Association

Note: *The 2025 figure is as of end-July. **The figures show net purchases by trust banks, often viewed as proxies for pension funds


Պարտատոմսերի շուկան այժմ մինչև տարեվերջ կանխատեսում է տոկոսադրույքի երկու իջեցում և 2026 թվականին ևս 3-4 իջեցում, ինչը դաշնային ֆոնդերի տոկոսադրույքը կնվազեցնի 3.00%-ից ցածր:

Market Expectations for Fed Funds Rate

(Data via Fed Funds Futures, August 2025 - January 2027)



Փողի զանգվածը համեմատաբար սահուն աճել է 1960-ական թվականներից ի վեր, բայց զգալիորեն արագացել է 2008 թվականի ֆինանսական ճգնաժամից ի վեր: Հատկապես կտրուկ թռիչք նկատվեց 2020-2021 թվականներին, երբ Դաշնային պահուստային համակարգը և ԱՄՆ կառավարությունը COVID-19 համավարակի դեմ պայքարի շրջանակներում իրականացրին լայնածավալ տնտեսական խթանման ծրագրեր: 2025 թվականի օգոստոսի դրությամբ M2 փողի զանգվածը հասավ նոր պատմական առավելագույնի՝ 22.12 տրիլիոն դոլարի:



Դաշնային պահուստային համակարգի կողմից նախընտրելի գնաճի նպատակը բարձրացել է մինչև 2.9%-ի, որը փետրվարից ի վեր ամենաբարձր ցուցանիշն է: Կկանգնեցնի՞ դա տոկոսադրույքների իջեցումը հաջորդ ամիս: Շուկան ասում է՝ ոչ, քանի որ կրճատուման սպասումները դեռևս կազմում են 87%: Նման պայմաններում ԴՊՀ-ն սովորաբար բարձրացնում էր տոկոսադրույքները, այլ ոչ թե նվազեցնում:

U.S. Core PCE Inflation Rate (YoY % Change)

Data via YCharts (Setpember 2022 - July 2025)



@CharlieBilello



Այս շաբաթվա ընթացքում 1296 ընկերություններ պատրաստվում են հրապարակել իրենց 2024 թվականի չորրորդ եռամսյակի ֆինանսական հաշվետվությունները: Այս շաբաթ շուկայի մասնակիցների կողմից առավել սպասված են՝ Broadcom-ի (AVGO), Salesforce-ի (CRM), Copart-ի (CPRT), Figma-ն (FIG) և Dollar Tree-ի (DLTR) հաշվետվությունները:

#1 / 69 Total

[save as portfolio](#) | [create alert](#) Refresh: 3min | [off](#)[←](#) Page 1 / 4 [→](#)

No.	Ticker	Company	Sector	Industry	Country	Market Cap	P/E	Price	Change	Volume
1	AVGO	Broadcom Inc	Technology	Semiconductors	USA	1398.77B	111.79	297.39	-3.65%	21,557,223
2	CRM	Salesforce Inc	Technology	Software - Application	USA	244.97B	40.08	256.25	0.68%	7,350,689
3	CPRT	Copart, Inc	Industrials	Specialty Business Services	USA	47.20B	32.26	48.81	0.12%	5,329,907
4	ZS	Zscaler Inc	Technology	Software - Infrastructure	USA	43.14B	-	277.05	-1.20%	1,491,242
5	FIG	Figma Inc	Technology	Software - Application	USA	34.26B	-	70.28	-1.38%	3,402,277
6	HPE	Hewlett Packard Enterprise Co	Technology	Communication Equipment	USA	29.62B	23.32	22.57	-2.55%	19,958,431
7	LULU	Lululemon Athletica inc	Consumer Cyclical	Apparel Retail	Canada	25.27B	13.80	202.20	-1.40%	3,147,057
8	DLTR	Dollar Tree Inc	Consumer Defensive	Discount Stores	USA	22.78B	-	109.17	-2.96%	3,719,765
9	CRDO	Credo Technology Group Holding Ltd	Technology	Semiconductors	Cayman Islands	21.12B	441.53	123.06	-6.65%	4,957,316
10	IOT	Samsara Inc	Technology	Software - Infrastructure	USA	20.58B	-	36.14	-0.85%	3,662,007
11	GWRE	Guidewire Software Inc	Technology	Software - Application	USA	18.27B	551.09	217.02	-0.77%	558,305
12	DOCU	DocuSign Inc	Technology	Software - Application	USA	15.49B	14.49	76.66	1.52%	2,272,338
13	CIEN	CIENA Corp	Technology	Communication Equipment	USA	13.28B	130.90	93.97	-4.00%	2,230,631
14	NIO	NIO Inc ADR	Consumer Cyclical	Auto Manufacturers	China	12.40B	-	6.38	-2.00%	56,874,919
15	TTAN	ServiceTitan Inc	Technology	Software - Application	USA	9.72B	-	107.23	-0.73%	688,835
16	CPB	Campbells Co	Consumer Defensive	Packaged Foods	USA	9.52B	21.10	31.93	0.92%	5,906,390
17	DSGX	Descartes Systems Group Inc	Technology	Software - Application	Canada	8.57B	60.33	99.95	-0.05%	629,060
18	TTC	Toro Co	Industrials	Tools & Accessories	USA	8.00B	20.76	81.06	-1.15%	1,130,950
19	GTLB	Gitlab Inc	Technology	Software - Infrastructure	USA	7.93B	481.64	48.02	-2.05%	4,955,104
20	HQY	Healthequity Inc	Healthcare	Health Information Services	USA	7.72B	65.02	89.33	1.18%	1,519,638

Filters: earningsdate:thisweek

[export](#)

Այս շաբաթվա ԱՄՆ տնտեսական օրացույցը

TIME (ET)	REPORT	PERIOD	ACTUAL	MEDIAN FORECAST	PREVIOUS
MONDAY, SEPT. 1					
	Labor Day holiday				
TUESDAY, SEPT. 2					
9:45 am	S&P final U.S. manufacturing PMI	Aug.	53.3	53.3	
10:00 am	ISM manufacturing	Aug.	48.5%	48.0%	
10:00 am	Construction spending	July	0.0%	-0.4%	
WEDNESDAY, SEPT. 3					
9:00 am	St. Louis Fed President Alberto Musalem speaks				
10:00 am	Job openings	July	7.4 million	7.4 million	
10:00 am	Factory orders	July	-1.3%	-4.8%	
1:30 pm	Minneapolis Fed President Neel Kashkari speaks				
2:00 pm	Fed Beige Book				
TBA	Auto sales	Aug.			

THURSDAY, SEPT. 4					
8:15 am	ADP employment	Aug.	75,000	104,000	
8:30 am	Initial jobless claims	Aug. 30	231,000	229,000	
8:30 am	U.S. productivity (revision)	Q2	2.6%	2.4%	
8:30 am	U.S. trade deficit	July	-\$77.8B	-\$60.2B	
9:45 am	S&P final U.S. services PMI	Aug.	55.3	55.4	
10:00 am	ISM services	Aug.	50.5%	50.1%	
10:00 am	Senate Banking nomination hearing for Stephen Miran to be Fed governor				
12:05 pm	New York Fed President John Williams speaks				
7:00 pm	Chicago Fed President Austan Goolsbee speaks				
FRIDAY, SEPT. 5					
8:30 am	U.S. employment report	Aug.	75,000	73,000	
8:30 am	U.S. unemployment rate	Aug.	4.3%	4.2%	
8:30 am	U.S. hourly wages	Aug.	0.3%	0.3%	
8:30 am	Hourly wages year over year		3.7%	3.9%	

 **AraratBank**

ՀՀ ԴԱՆԱՏՈՒԹՅԱՆ ԲԱՆԿ
ՊՈՍՏ. 95.2 ԲՈՒՄԱՆ ԲՈՒԹՅԱՆ 87, 85 ՔՐԱՍԵՆՅԱՆ
araratbank.am / araratbank.am

ԲԱՆԿԱՆՈՒՄԻ ԵՎ ՄԻԱՐՆԻ ՀԱՅՐԱՊԱՐԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՐԱՆՈՒՄԻ
2-րդ հատված

Քանի որ արհեստագործական
համայնքում մեկ քան անհատական ընտանիքներ
միջազգային անհատական ֆինանսական համայնքում
բացառաբար ընտանիքներ են, որոնք օգտագործում են
արհեստագործական ընտանիքները և այլն:

060 408 005, 060 408 002, 010 592 301
Երևան, Բուզանդ 87, 85 գրասենյակ
brokerage@araratbank.am